



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 22 » 02 2021թ.

№ 08/ԼԱ/ - 77

**Փետրվարի 15-21-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

Փետրվարի 16-ին, 19-ին և 21-ին շրջանների զգալի մասում, 17-18-ին, 20-ին հանրապետության գրեթե ողջ տարածքում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Սեմյոնովկայում 62,6մմ, Տաշիրում՝ 54մմ, Արագած բարձր լեռնայինում՝ 53մմ, Հրազդանում՝ 48,4մմ, Ջերմուկում՝ 45,6մմ, Ապարանում և Դիլիջանում՝ 45,1մմ, Ստեփանավանում՝ 44,9մմ, Որոտանի լճ.-ում՝ 43մմ, Իջևանում՝ 42,6մմ, Պուշկինի լճ.-ում՝ 41մմ, Սևանում՝ 40մմ, Օձունում՝ 37,6մմ, Ֆանտանում՝ 36,3մմ, Բագրատաշենում և Ճամբարակում՝ 34մմ, մնացած շրջաններում՝ 10-31մմ քանակությամբ (Արմավիրում՝ 3,4մմ): Փետրվարի 15-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը փետրվարի 15-16-ին նորմայից բարձր է եղել 7-12 աստիճանով, 17-ին՝ 6-10 (Տավուշում, Լոռիում, Սյունիքում՝ նորմայից ցածր է 1-2), 18-19-ին նորմայից ցածր՝ 2-6 (Արարատյան դաշտում նորմայից բարձր՝ 1-2) , 20-21-ին նորմայից ցածր՝ 1-4 (Արարատյան դաշտում՝ 1-2) աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Արարատյան դաշտում, Սյունիքում գրանցվել է +15...+19°C (Մեղրիում՝ +22°C), Տավուշում, Լոռիում, Վայոց Ձորի, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում՝ +9...+14°C (Արենիում՝ +19°C, Դիլիջանում՝ +17°C, Աշտարակում՝ +16°C, Ստեփանավանում՝ +15°C), Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +5...+10 (Գյումրիում՝ +12°C) աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է. Շիրակում, Լոռիում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում գրանցվել է -9...-14°C (Աշոցքում՝ -18°C, Տաշիրում՝ -17°C, Ամասիայում և Ծաղկահովիտում՝ -16°C, Գյումրիում՝ -8°C), Տավուշում, Սյունիքում, Վայոց Ձորի, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում՝ -2...-6°C (Թալինում՝ -11°C, Դիլիջանում՝ -10°C, Սիսիանում՝ -9°C, Գորիսում՝ -8°C), Արարատյան դաշտում՝ -2...-4°C:

Շաբաթվա ընթացքում դիտվել է քամի՝ 5-13մ/վ, պողոթյունների ժամանակ՝ 15-19մ/վրկ (Ծաղկահովիտում՝ 17մ/վրկ, պողոթյունների ժամանակ՝ 24մ/վրկ, Եղվարդում՝ 15մ/վրկ, պողոթյունների ժամանակ՝ 18մ/վրկ) արագությամբ:

Փետրվարի 17-19-ին Ամասիայում, Գյումրիում, Մասրիկում դիտվել է բուք՝ 4-7 մ/վրկ, պողոթյունների ժամանակ՝ 9-17մ/վրկ (Աշոցքում՝ 16մ/վրկ, պողոթյունների ժամանակ՝ 18մ/վրկ, Գավառում՝ 10մ/վրկ, պողոթյունների ժամանակ՝ 20մ/վրկ) արագությամբ:

Փետրվարի 21-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բարձրլեռնային կայանում 142սմ, Որոտանի լքբ.-ում՝ 87սմ, Ամբերդում՝ 65սմ, Ջերմուկում՝ 63սմ, Անանուն լքբ.-ում՝ 51սմ, Պուշկինի լքբ.-ում՝ 44սմ, Սեմյոնովկայում՝ 43սմ, Հրազդանում՝ 42սմ, Դիլիջանում՝ 37սմ, Ամասիայում՝ 34սմ, Տաշիրում՝ 33սմ, Ապարան լճայինում՝ 32սմ, Աշոցքում՝ 31սմ, Ստեփանավանում՝ 30սմ, Ճամբարակում՝ 28սմ, Սևանում՝ 26սմ, Օձունում՝ 22սմ, Ապարանում և Իջևանում՝ 21սմ, Գորիսում՝ 20սմ, Մասրիկում՝ 19սմ, Գավառում և Ֆանտանում՝ 18սմ, մնացած շրջաններում՝ 1-15սմ:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 1սմ-ով և կազմել՝ 1900.54մ (21.02.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 11 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար

Լ.Ազիզյան